

եւ յետոյ եղեւ կաթողիկոս ի սուրբ Էջմիածին: Եւ կատարեալ զուխտս իւրեանց յաստուածախօս լեռնէն՝ դարձան անտի Համիթ. եւ արարեալ ժողով բազում եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ բազում տօլվաթաւորաց վաճառականաց եւ ռամկաց, նաեւ Ենկի Սօճան Ամթայ, գրեցին առ առաջնորդսն եւ առ տօլվաթաւորսն Վանայ, եւ ժողովեալ բազում առաջնորդաց եւ տօլվաթաւորաց՝ եկեալ յերուսաղէմ ՌԾԹ թուին (1610): Եւ էր պարտք երուսաղէմայ ԿՌ զուրուշ, որ առաջնորդ էր Արդար Դաւիթն. եւ սատարութեամբ հզօրին Աստուծոյ վճարեալ զպարտքն եւ ազատեալ զգգեստն եւ եղեալ զԳրիգոր Պարոն տէրն առաջնորդ սուրբ երուսաղէմայ, ի սոյն թուին»:

Այս ճանապարհորդութիւնը կ'ականարկէ Առաքել Դաւրիթեցի (էջ 285), երբ կը գրէ թէ Մովսէս այցելեց Եգիպտոսի անապատները. Առաքելի խօսքերն են. «որ եւ եկեալ տէր Մովսէս՝ գնացեալ եհաս յերուսաղէմ. եւ կատարեաց զուխտ ամենայն տնօրինականաց Տեառն: Ապա անտի գնաց յաշխարհն Եգիպտոսի եւ շրջեալ յամենայն վանօրայս եւ յանապատս ազգին Ղփթոց, վասն զի վանօրայք եւ անապատք բազումք գոն, յորում բնակեալ են բազմահոյլ միաբանք՝ կարգօք եւ սահմանօք կրօնաւորականօք. որք ունին զկարգաւորութիւն ամենայն իրաց, ժամատեղեաց եւ սեղանատեղաց եւ զգեստուց եւ